ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Հայաստանի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Հայ Առաքելական Եկեղեցու նորընտիր Հովվապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս օծվելու կապակցությամբ: Հավատում եմ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Երկրորդի հովվապետությամբ համայն հայությունը Հայրենիքում և Սփյուռքում նոր շնչով ու նորոգ նվիրումով կհամախմբվի իր Եկեղեցու շուրջ: Հավատում եմ, որ Գրիգոր Լուսավորչի գահին է բազմում հեղինակություն վայելող և արժանավոր Հայրապետ:

Այսօր, երբ հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունները դեռ արձագանքում են բոլորիս հոգիներում, մենք առավել ևս գիտակցում ու գնահատում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեծ առաքելությունը: Առաքելություն, որ կոչված է, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ ուս ուսի, մխիթարություն և օրհնություն բաշխելու մեր ժողովրդին և խթանելու նրա հոգևոր-բարոյական վերազարթոնքը, ինչպես նաև՝ զորավիգ լինելու հայոց պետության հզորացմանը: Հավատում եմ, որ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի առաջնորդությամբ մեր երկրի համար բախտորոշ և պատասխանատու այս ժամանակահատվածում Հայ Առաքելական Եկեղեցին կանի առավելագույնը՝ իր այդ սրբազան առաքելությունը կատարված տեսնելու ճանապարհին:

Վեհափառ Տեր, կրկին շնորհավորում եմ Ձերդ Սուրբ Օծությանը: Կարող եք վստահ լինել, որ Ամենայն Հայոց Հայրապետը կվայելի Հայաստանի Հանրապետության ղեկավարության ամբողջական զորակցությունը: